

Ձոր հայցմամբ գընդին, զրոշմեաց զկիպարին՝ մածմամբ յերեսին :
 Այն ի բերկրութի սք մետասանին, որպէս դու կուսին .
 Ձայն Բարգուզիմին, բերեալ հակազին (s) զքեզ Մագիստրոսին :
 Այն կայ պահեստին Ռըշտունեաց յերկրին, ի Հոգեց վանին :
 Իսկ դու յայտնագոյն յԱյրարատ երկրին՝ ի Հայու թառ սք ուխտին :
 Ահա :

297ա **Վ**անն այս ըստ կարգի կարճառօտ || պատմի սակս այս պատճառի .
 Թէ ուր եւ ուստի եկն յայսքմ տեղի փրկիչս աշխարհի,
 Ձոր յետ քի՛ տիպս այս նազելի ի Հոռոմ վերածի :
 Իսկ Մագիստրոսի, Գրիգը՛ հայկազնի, յետ ժամանակի :
 Շինէ տեղ ուխտի, յիւրում կայանի ի տարուն երկրի :
 Ի սմանէ որդի Վահրամ պատանի ի Հոռոմ յուղարկի :
 Խընդրել փափաքի զտիպս այս հրաշալի տալ իւր նահանգի :
 Իսկ սորին որդի յոյժ վերապատուի ի գահըն Հոռոմի :
 Եւ տըւեալ զխընդրելի զգանձն անթաքչելի առանց պատճառի :
 Առեալ գայ անտի՛ զտիպս այս տենչալի, սըրտիւ բերկրալի :
 Իսկ Մագիստրոսի մեծօ հանդիսի՛ ընդ յառաջ շարժի :
 Ի ծունկս անկանի՛ զրոշմին քի՛ յորդ արտասուելի :
 Բարձեալ ի յուսի, բերեալ գնէ յուխտի, յարկ իւր կայանի :
 Իսկ յետ այս բանի, յետ ժամանակի աւուրք անցանի :
 Վասիլ արքաի՛ Գէորգ իշխանի, ոստ Բագրատունի :
 Փոխելով անտի բերեն հըրճուալի տունս Այրարազին :
 Յիւր հիմնարկելի ուխտըն հրաշալի՛ որ Հայու թառի : Ահա :

Իսկ Մագիստրոսին յորժամ եղ հարկին զտիպն անձայն :
 Արար խրախուծի տաւնախմբութի գեաւթն աւր միասին :
 Եւ ի գեմս զրոշմին եւ յեկեղեցին երգեաց գովութի :
 Ձերգըս շարականին, Ձորս ըստ պատկերին, որք ի կարգ խաչին :
 Դու տը՛ միածին զտիպ քո բերկրածին . տաճար քո կազմին :
 Ձնորոգեալ անձին տաճարս այս լիցին քեզ ի բնակութի :
 Եւ կեցո զորդին, քում տը՛ ծառաին, զտիպս քո բերողին :
 Ձպատուեալն ի Հոռոմին անդ ուր կա շիրիմ հօտտոյ վիմին :
 Որ զկենդանագրին զտիպդ անձաին կերպին ծառային :
 Շնորհեցեր կըրկին զրոշմամբ ի փայտին մղ (մեզ) յուատրութի ,
 Որ երեք յանձին զբարձօղ իւր բնօին զկերպ եւ զնմանութի :
 Ի փառքս վերին, հաւր քո եւ հոգւոյն սուրբ երբեակ անձին : Ահա :

Երգեա վեհագոյն, երգեա գերագոյն, խորան բարձրագոյն :
 Դուստր դու վերնոյն, նոր սիոն անուն, զշխո բարձրելոյն :
 Ով ան տուն, կանկնեալդ ի վերջնոյն, գեր քան զառաջնոյն
 Շինեալդ ի սըրբոյն Մագիստրոս անուն, ազգօ պահլաւուն :
 Քանզի շնորհատուն ետ քեզ զախոն զտիպն իւր հոմանուն :
 Ձաւճեալն ի հոգոյն ըզփրկիչ անուն կոշմամբ տիրուհոյն :
 Ձայն որ խաչելոյն շնորհել սըրբոհոյն զրոշմամբ սիրելոյն :
 Յըղձումն մարմնոյն, բերկրումըն հոգւոյն, մաւր տըրտմեցելոյն :
 Եւ մեզ փարատումն յախտից եւ վըրկումն ի չար յամպրոպոյն :
 Արդ տաւնեա զտաւն զրոշմիս գերագոյն, մայր լուսո սիոն :
 Գոչեա բարձրագոյն, կոչեա միաբուն զազգս հայկազուն :
 Ձհովիւ քո արթուն, զպետ քո եւ զրաբուն մանկամբ քո սպասուն :